Հանձնաժողովի՝ ընտրողների հոսքը կարգավորող անդամի գործառույթները

- Կարգավորե՛ք քվեարկության շենք մտնող ընտրողների հոսքը:

  ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

  ✓ Նոր կորոնավիրուսով հարուցված վարակի տարածումը կանխարգելելու նպատակով ապահովե՛ք ընտրողների միջև անվտանգ հեռավորության պահպանում (այսպիսի հնարավորության դեպքում)

- Ընտրողին խնդրե՛ք ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը և ժամանակավորապես հանել դիմակը:

  ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

  ✓ Եթե ընտրողը չունի Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր, բացատրե՛ք, որ նա չի կարող մասնակցել քվեարկությանը, և խնդրե՛ք լքել ընտրական տեղամասը:

  ✓ Եթե Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր ներկայացնելու ժամանակ ընտրողը չի հանում դիմակը, նրան թույլ չեն տալիս մուտք գործել քվեարկության շենք:

- Ուլտրամանուշակագույն լապտերով ստուգե՛ք, թե չունի արդյոք ընտրողը նշմարում, և, երբ կհամոզվեք, որ ընտրողը չունի նշմարում, նրան տվե՛ք քվեարկությանը մասնակցելու իրավունք:

  ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

  ✓ Եթե ուլտրամանուշակագույն լապտերով նշմարումը ստուգելիս պարզվի, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Ընտրողի ով լինելը տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին:

- ✓ Այն ընտրողը, որը «ֆիզիկական վիճակի», մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով չի կարողանում ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, չի անցնում նշմարման ստուգման և նշմարման ընթացակարգերը:

- ► Հետևե՛ք՝ քանի ընտրող է կանգնած ընտրողի համար հատկացված գրանցման սեղանի մոտ: Եթե գրանցման սեղանի մոտ երկու ընտրող կա կանգնած, ժամանակավորապես դանդաղեցրե՛ք քվեարկության շենք հերթական ընտրողի մուտքը:
- ► Ընտրողին ուղղորդե՛ք դեպի այն գրանցման սեղանը, որին պատկանում է ընտրողների ցուցակում ընդգրկված՝ նրա ազգանվան առաջին տառը և ընտրողի համարը ընտրողների ցուցակում:

Նկատի՛ ունեցեք.

- ✓ Նոր կորոնավիրուսով հարուցված վարակի տարածումը կանխարգելելու նպատակով արգելվում է ընտրողի և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող այլ անձանց մուտքը քվեարկության շենք՝ առանց դիմակի և ախտահանիչ լուծույթով ձեռքերի մշակման:

- ✓ Նոր կորոնավիրուսով հարուցված վարակի տարածումը կանխարգելելու նպատակով թույլ չի տրվում քվեարկության շենք մուտք գործել քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձին առանց ջերմասքրինինգի (ջերմաչափման): Տենդ՝ 37°C կամ 37°C-ից բարձր ջերմաստիճան, արձանագրելու դեպքում, անձը ենթարկվում է ջերմաստիճանի վերստուգման (5 րոպեանոց ընդմիջումով): Տենդի կրկնակի արձանագրման դեպքում անձին թույլ չի տրվում մուտք գործել քվեարկության շենք: Տենդ արձանագրելու դեպքի մասին տեղեկությունը պետք է տրամադրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:

- ✓ Ընտրողների ջերմասքրինինգ չի իրականացվում:

- ✓ Քվեարկության շենքի ելքում ընտրողի համար պետք է ապահովված լինի ախտահանիչ լուծույթով ձեռքերը մշակելու հնարավորություն: